Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-361[1]-14.10.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) 137.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Երթուղու սպասարկման ընթացքում սահմանված փոխադրավարձից բարձր փոխադրավարձով փոխադրումների իրականացնելը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	Եզրակացություն	**Կատարված փոփոխությունները**
1. ՀՀ կառավարություն	Օրենսդրական տեխնիկայի տեսակետից՝ 1/ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ հոդվածի 1-ին մասում «բառերով» բառը փոխարինել «բառերը» բառով:	Ընդունվել է:	1 Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2/ Նախագծի 3-րդ հոդվածում «ենթակետն» բառը փոխարինել «կետն» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է:	2.Կատարվել է համապատասխան փոփոխություն:

2. ՀՀ ԱԺ պատգամավոր Թ. Պողոսյան	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպություն» բառերից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. «երթուղային փաթեթ՝ համայնքի ավագանու կողմից հաստատված տարեկան ծրագիր, որն ընդգրկում է տվյալ համայնքը սպասարկող երթուղային գծերի քարտեզը, ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների բոլոր կանգառներ ժամանման և մեկնման ժամանակացույցերը, օպերատորի կողմից երթուղային տոմսերի (ժամային, օրական, շաբաթական, ամսական և տարեկան) թողարկման կարգը, յուրաքանչյուր կայանատեղի հասնելու համար միջինացված ուղևորավարձի սահմանման կարգը և վարորդների վերապատրաստման դասընթացների ծրագիրը:	Չի ընդունվել:	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՕ-233-Ն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է երթուղու սխեմա հասկացություն՝ որպես երթուղու սպասարկման հիմնական փաստաթուղթ (գրքույկ), որը պարունակում է տեղեկություններ երթուղու կանգառների, միջկանգառային հեռավորությունների, երթուղու ճանապարհային պայմանների մասին: Բացի այդ օրենքի 10-րդ հոդվածը կարգավորում է կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմակերպան հետ կապված հարցերը, այդ թվում նաև, որ Երևան քաղաքի ներքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցը կազմակերպում է Երևանի քաղաքապետը: Նախագծով օպերատորը հանդես է գալու որպես

			երթուղի սպասարկող կազմակերպություն, որը, ինչպես և այլ կազմակերպությունները, չի իրականացնելու երթուղային տոմսերի թողարկման գործառույթներ: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և «դ» ենթակետերով սահմանված են. «գ) միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների համար՝ D կարգի ավտոտրանսպորտային միջոցի վարման վերջին մեկ տարվա կամ մարդատար տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների վերջին 2 տարվա աշխատանքային փորձ. դ) ավտոբուսային փոխադրումների համար՝ միկրոավտոբուսային փոխադրումների իրականացման վերջին երկու տարվա աշխատանքային փորձ»: Այսինքն, վարորդների նկատմամբ որևէ լրացուցիչ պահանջ չկա,

			ինչի կապակցությամբ իրականացվի վերապատրաստում: